ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«22» 01 2022թ.
№ ԳՀԱՊՁԲ-108

«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՀԿԸ (ՀՎՀՀ 00496756) նախագահ Ա. Նավասարդյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռոստովյան 9/14
էլ. հասցե՝ gaylavasht21@yandex.ru
հեռ.՝ 093-00-30-31

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԿ-ի միջև 10.09.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/10-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2021թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 01.12.2021թ., պետք է մատակարարեր թվով 25 անվանատողերով նախատեսված ապրանքներ, որոնցից 2 անվանատողերով նախատեսված ապրանքները՝ 26 հատ շարժիչի մխոցից 18 հատը և 16 հատ բոցամուղ հավաքականից 8 հատը չի մատակարարվել, իսկ 7 հատ հովացման համակարգի հիդրոկցորդիչը, 11 հատ գործարկիչը, 11 հատ գեներատորը, 60 հատ բոցամուղի փոշեցիրը, 2 հատ կարդանային լիսեռը, 6 հատ հովացուցիչը, 15 հատ կցորդման համակարգի պնևմոհիդրոուժեղարարը, 20 հատ տարվող սկավառակը, 10 հատ մեկնարկիչը, 12 հատ գեներատորը, 20 հատ հովացման համակարգի ջրի մղիչ հավաքականը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 50 հատ արգելակման կոճղակների մակադրակը, 6 հատ ղեկի ուժեղարարի մեխանիզմը (շտոկ), 5 հատ ղեկային մեխանիզմ հավաքական ձողովը և 20 հատ ուժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանովը չի մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 24-ին միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԿ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 48 209 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 32 941 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 658 824 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 988 236 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am